«ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ՉԱՐԵՆՑԱՎԱՆՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

Չարենցավան **01/03/2024թ.**

Սույն Համաձայնագիրը կնքվում է «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի («Չարենցավանի համայնքապետարանի») (ՀՎՀՀ՝ 03022497), ի դեմս՝ Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանի (այսուհետ՝ «Համակարգող»), մի կողմից, և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Արամ Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) (ՀՎՀՀ՝ 02800812), ի դեմս ՀՈԱԿ-ի տնօրեն Վահագն Մարգարյանի (այսուհետ՝ «Իրականացնող»), մյուս կողմից, միջև, **«Մշակույթի զարգացում. կարողությունների հզորացում և համագործակցության խթանում Չարենցավանում»** ծրագրի շրջանակներում («Ծրագիր»), հիմնական դրամաշնորհատու Գյոթե Ինստիտուտի (Goethe-Institut e.V.) («Պատվիրատու») և Չարենցավանի համայնքապետարանի միջև կնքված թիվ **EU315** դրամաշնորհային պայմանագրի (Հավելված IV) հիման վրա, որն ստորագրվել է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող EU4Culture նախագծի՝ Առաջարկների Սահմանափակ Կանչի շրջանակներում, Չարենցավանի մշակութային զարգացման ռազմավարության (ՄԶՌ) իրականացմանն աջակցության նպատակով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 15 փետրվարի 2024 թվականի **N 18-Ա** որոշումը (Հավելված V)՝ ծրագրի իրականացումը վերոհիշյալ ՀՈԱԿ-ին պատվիրակելու մասին:

Կողմերը եկան համաձայնության հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1 Համաձայնագրի նպատակը և ընդհանուր դրույթները

1.1 Սույն Համաձայնագրի նպատակն է սահմանել «Մշակույթի զարգացում. կարողությունների հզորացում և համագործակցության խթանում Չարենցավանում» ծրագրի իրականացման ընթացակարգերը:

1.2 Սույն Համաձայնագիրը կարգավորում է Համակարգողի և Իրականացնողի միջև հարաբերությունները, ինչպես նաև՝ Ծրագրին նրանց մասնակցության վերաբերյալ իրավունքներն ու պարտավորությունները:

1.3 Սույն Համաձայնագրի առարկան և դրան ուղղված հայտադիմումը մանրամասն նկարագրված են Հավելված I-ում և Հավելված II-ում, որոնք սույն Համաձայնագրի այլ հավելվածների հետ կազմում են պայմանագրի անբաժանելի մասը:

1.4 Սույն փաստաթղթի և իր հավելվածների միջև հակասությունների դեպքում, գերակշռում է սույն Համաձայնագրի բովանդակությունը:

ՀՈԴՎԱԾ 2 Համաձայնագրի տևողությունը

2.1. Ծրագրի մեկնարկի ամսաթիվը 2024թ. մարտի 1-ն է, ինչպես սահմանված է Պատվիրատուի հետ վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրում, որը համարվում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

2.2. Ծրագրի իրականացման տևողությունը 4 (չորս) ամիս է, ինչպես սահմանված է դրամաշնորհային պայմանագրում:

2.3. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի կողմից վերջին ստորագրման օրվանից և ավարտվում է սույն Համաձայնագրի 2.2 կետում նշված ժամկետի ավարտից հետո, մինչև սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ կատարումը:

2.4. Սույն Համաձայնագիրը առանց առարկության կդադարեցվի՝ Համակարգողի կողմից Պատվիրատուի հետ վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրի դադարեցման դեպքում:

ՀՈԴՎԱԾ 3 Դերեր և պարտականություններ

3.1. Իրականացնողը պարտավոր է.

ա) իրականացնել Ծրագիրը, գործի դնելով բոլոր անհրաժեշտ և հնարավոր միջոցները՝ ապահովելով Ծրագրի իրականացումը՝ Հավելված II-ում սահմանված Ծրագրի նկարագրության և սույն Համաձայնագրի ժամկետների և պայմանների համաձայն,

բ) պահպանել բյուջեով մանրամասն սահմանված դրույթները (Հավելված III), հիմք ընդունելով թույլատրելի ծախսերի սահմանումը վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրի Հոդված 5-ում,

գ) իրականացնել Ծրագիրը պատասխանատվությամբ, արդյունավետությամբ, թափանցիկությամբ և ջանասիրությամբ, ֆինանսական կայուն կառավարման սկզբունքին և ոլորտում ունեցած լավագույն փորձին համապատասխան,

դ) Պատվիրատուին տրամադրել բովանդակային (նարատիվ) և ֆինանսական հաշվետվություններ՝ վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրի 5-րդ և 6-րդ հավելվածների ժամկետներին և ձևաչափին համապատասխան, համաձայն վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրի արժույթի և լեզվի,

ե) ապահովել հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի իրականացման վերաբերյալ ամբողջական հաղորդակցություն, ներառյալ՝ համապատասխան հրապարակումներ, մամուլի հաղորդագրություններ և թարմացումներ,

զ) Համակարգողին փոխանցել սույն Համաձայնագրով և հավելվածներով պահանջվող տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր՝ աուդիտի, ստուգումների, մոնիթորինգի և գնահատման համար, ինչպես նկարագրված է վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրի Հոդված 6-ում,

է) ձեռք բերել համապատասխան ներքին պայմանավորվածություններ Պատվիրատուի հետ՝ սույն Համաձայնագրի շուրջ ներքին համագործակցության և ներկայացուցչության համար, որոնք համահունչ են սույն Համաձայնագրի դրույթներին և կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

3.2. Համակարգողը պարտավոր է.

ա) վերահսկել, որ ապահովվի Ծրագրի պատշաճ իրականացումը՝ համաձայն սույն Համաձայնագրով սահմանված դրույթների,

բ) կողմերի անունից հանդիսանալ Պատվիրատուի վճարումների միակ ստացողը, և ապահովել, որ համապատասխան վճարումները կատարվեն Իրականացնողին առանց անհիմն հետաձգման,

գ) համաֆինանսավորել Ծրագիրը՝ բյուջեի ամբողջական գումարի և Պատվիրատուի կողմից նախապես փոխանցվող գումարի տարբերության չափով, վերադարձի պայմանով,

դ) հավաքել, դասակարգել վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ տեղեկությունները և սահմանված կարգով փոխանցել Պատվիրատուին,

ե) տեղեկացնել Պատվիրատուին Իրականացնողի իրավական, ֆինանսական, տեխնիկական, կազմակերպչական, ինչպես նաև կողմերից որևէ մեկի անվան, հասցեի կամ օրինական ներկայացուցչի փոփոխությունների մասին,

զ) Պատվիրատուի կողմից Ծրագրի աուդիտի, ստուգումների, մշտադիտարկման և գնահատման ժամանակ պատասխանատու լինել անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման համար՝ ինչպես նկարագրված է վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրի Հոդված 6-ում:

ՀՈԴՎԱԾ 4 Ֆինանսավորում

4.1. Սույն Համաձայնագրի գինը սահմանվում է **30000** Եվրոյին համարժեք ՀՀ դրամ (Պատվիրատուի կողմից կանխավճարի փոխանցման պահի փոխարժեքով), որը համապատասխանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրի բյուջեի համապատասխան տողերով նախատեսված չափին (Հավելված III):

4.2. Համակարգողը միջոցները կփոխանցի Իրականացնողին հետևյալ կարգով. Պատվիրատուի կողմից կանխավճարին (նախաֆինանսավորմանը) կավելացնի համաֆինանսավորում վերադարձի պայմանով՝ վերոհիշյալ դրամաշնորհային պայմանագրի բյուջեի գումարից պակասող չափով, և կփոխանցի Իրականացնողին, Պատվիրատուի կողմից փոխանցված գումարի ստացումից հետո՝ 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում:

4.3. Գումարի՝ բանկային հաշվին նստելուց հետո Իրականացնողը պարտավոր է 3 օրվա ընթացքում հաստատել գումարը ստանալու փաստը:

ՀՈԴՎԱԾ 5 Տեսանելիություն

5.1. Իրականացնողը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը հանրայնացնելու այն փաստը, որ Ծրագիրը ֆինանսավորվում կամ համաֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից EU4Culture նախագծի շրջանակներում: Նման միջոցառումները պետք է համապատասխանեն EU4Culture նախագծի հաղորդակցման և տեսանելիության պահանջներին: